ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՍԱՄՎԵԼ ՆԻԿՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նիկոյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Կարեն Ավագյանի և Ռաֆիկ Պետրոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. Նախագծի 1-ին հոդվածն անհրաժեշտ է խմբագրել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջնորդությունը պետք է վերաբերի ապացույցի ձեռքբերմանը: Բացի դրանից՝ դատարան գրավոր միջնորդություն անելու անհրաժեշտություն պետք է չլինի այն դեպքերում, երբ գործին մասնակցող մյուս անձը նախապես տվել է համաձայնություն իր նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակմանը:

2. Նախագծի հոդվածների համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրված է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ *Նախագիծը վերաբերում է քաղաքացիական դատավարության ընթացքում նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը սահմանափակող ապացույցներ ներկայացնելու կարգին:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում ապրանքային շուկաների հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի “Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին” N 18-Ն որոշման համաձայն:

Նախագիծը սոցիալական պաշտպանության ոլորտում ունի չեզոք ազդեցություն:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1.«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում և այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

<<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

<<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի՝ ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական բյուջեի մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային ընագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

Նախագիծ
Պ-1350-02.03.2012-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ նոր 49.1.-րդ հոդվածով.

«***Հոդված 49.1. Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը սահմանափակող ապացույցներ ներկայացնելու կարգը***

1. Այն ապացույցները, որոնց ներկայացնելը կապված է գործին մասնակցող մյուս անձանց նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հետ, կարող են ներկայացվել միայն օրենքով նախատեսված դեպքերում գրավոր միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու դեպքում:

2. Միջնորդության մեջ պետք է նշվեն ապացույցը, գործի համար նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք կարող են հաստատվել այդ ապացույցով, ինչպես նաեւ այն անձանց անունը, ազգանունը, որոնց իրավունքները կարող են սահմանափակվել»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության մասին

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է անձի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը (այսուհետ՝ նամակագրություն) սահմանափակող ապացույցներ ներկայացնելու կարգը ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: Քանի որ անձի նամակագրության իրավունքը, ի կատարումն ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված նպատակների, կարող է սահմանափակվել ոչ միայն քրեական դատավարության, այլեւ քաղաքացիական դատավարության շրջանակներում, ուստի նամակագրությունը որպես ապացույց կարող է ներկայացվել դատարանի որոշման հիման վրա՝ օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով:

Այդ հարցը կարգավորված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, որի 14-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունք: Քրեական դատավարության ընթացքում արգելվում է անձին նշված իրավունքներից ապօրինի զրկելը կամ այդ իրավունքները սահմանափակելը:

2. Քրեական դատավարության ընթացքում նամակագրության, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով»:

Իսկ միջնորդությունների ներկայացման եւ քննարկման կարգը առավել մանրամասն կարգավորված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ եւ 39-րդ գլուխներում:

Նախագծով առաջարկվող իրավակարգավորումը բխում է նաեւ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից, ըստ որի՝ հեռախոսազանգերը Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով ներառված են «անձնական կյանք» եւ «նամակագրություն» հասկացությունների շրջանակում (Տես Amann v. Switzerland [GC], թիվ 27798/95 գործը, կետ 43, ECHR 2000-II): Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր մի շարք որոշումներում անդրադարձել է «հեռախոսով կատարվող հաղորդակցություններ» հասկացության բացահայտմանը՝ նշելով, որ «հեռախոսային խոսակցությունների ժամանակի ու տեւողության եւ, մասնավորապես, զանգահարված համարների վերաբերյալ տեղեկությունների օգտագործումը կարող է խնդրո առարկա դառնալ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում, քանի որ նման տեղեկությունները հանդիսանում են «հեռախոսով կատարվող հաղորդակցությունների բաղկացուցիչ մաս» (Տես՝ Copland v. theUnited Kingdom, 2007թ. ապրիլի 3-ի վճիռը, կետ 43, Malone v. theUnited Kingdom, 1984թ. օգոստոսի 2-ի վճիռը, Series A թիվ 82, կետ 84):

Մասնավորապես, վերոհիշյալ իրավունքի սահմանափակման դեպքեր նախատեսված են «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածում, որի համաձայն՝ օպերատորը կամ ծառայություններ մատուցողն իրավասու է բացահայտել հաճախորդների կողմից օգտագործվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, նպատակակետի, քանակի եւ տեխնիկական պայմանների վերաբերյալ տեղեկությունները, եթե բացահայտումն անհրաժեշտ է ի պաշտպանություն օպերատորի կամ ծառայություններ մատուցողի (ընթանում են վարույթներ ընդդեմ այդ օպերատորի կամ ծառայություններ մատուցողի):